ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ «ԴԵՊԻ ԱՆՀՈՒՆԸ» ՊՈԵՄԸ

ՍԻՐՎԱՐԴ ԱՍՐՅԱՆ
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, ՀՀ, Երևան
Էլ. հասցե՝ asryansilva@gmail.com
ԱՆՆԱ ԴԱՎԹՅԱՆ
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, ՀՀ, Երևան
Էլ. հասցե՝ asryansilva@gmail.com

DOI: 10.24234/scientific.v1i51.318

ԱՄՓՈՓՈՒՄ

Հետազոտության օբյեկտը գյուղական միջավայրում հետամնաց բարքերն ու անգիտությունն են: Հետազոտության նպատակն է՝ բացահայտել անցյալ դարաշրջանի բարքերը, մարդկային մտածելակերպի ինքնատիպությունը, կյանքի և մահվան, մարդու և բնության փոխհարաբերությունների մասին խորհրդածությունները Հովհաննես Թումանյանի «Դեպի անհունը» պոեմի հիման վրա: Հետազոտության մեթոդաբանությունը և մեթոդները. որպես մեթոդաբանական հիմք ընդունվել է պատմական ժամանակաշրջանի գյուղական մտածելակերպի առանձնահատուկ դրսևորումները, մտածելակերպի և իրական արարքների փոխկապակցվածությունը, պատճառահետևանքային կապերը, տվյալ ժամանակաշրջանի մարդու ընդհանուր զարգացման յուրահատկությունները:

Որպես մեթոդ ընտրվել է տվյալ ժամանակաշրջանի և ներկա ժամանակաշրջանի համեմատությունը, գրական ստեղծագործության վերլուծությունը, ինչպես նաև ստեղծագործության համակարգային բացահայտումները և տարբեր մոտեցումների միասնական ամբողջականությունը:

Որպես վերջնարդյունք արձանագրենք՝ մարդը որպես բնության մասնիկ՝ մահվանից հետո շարունակաում է ապրել բնության մեջ՝ ձուլվելով բնությանը, նրա ֆիզիկական մահը դեռևս չի նշանակում նրա կյանքի ավարտը, որովհետև նա գնում է դեպի անհունը՝ մնալով մարդկանց հիշողություններում՝ իր գործերով ու բարի հուշերով, և ինչպես մեր անմահ Հ. Թումանյանն է գրել. «Գործն է անմահ, լավ իմացեք»:

Որպես հիմնական եզրակացություն՝ արձանագրենք, որ ֆիզիկական մահը կյանքի ավարտ չէ, քանի որ մարդը եղել և շարունակում է մնալ բնության օրգանական

մաս՝ շարունակելով գոյատևել մարդկանց հիշողություններում, հուզական ապրումներում և իր կերպարով լավ հետագիծ թողնելով ապրողների համար։

Բանալի բառեր *՝հետամնացություն, խավար, մահ, ողբերգություն, լեթարգիկ քուն, թաղվել կենդանի, հուշ, կորստի ցավ, հոգի, անհուն։*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

...Բայց ո՜վ կտա էն վայելքը՝ ինքս ինձ էլ չըզգայի,

Ու հալվեի, ծավալվեի, ամենքի հետ լինեի...

«Աշխարհներ հայտնագործելը Թումանյանի մենաշնորհն է: «Իմ ընկեր Նեսոն» մի յուրահատուկ աշխարհ է, «Լոռեցի Սաքոն» մի այլ աշխարհ է՝ մարդկային հոգու մթին քարանձավների մեջ՝ միամիտ մարդու հորինած չարքերով ու ոգիներով լցված: «Հառաչանքը» աշխարհ է՝ ըմբոստության հրդեհով: «Անուշը» բազում աշխարհներ է ամփոփում իր մեջ, հետո վերին մի խորհրդով այդ աշխարհները բաց է լինում մարդկությանն ի ցույց և ի զարմանք: Այդպիսին են «Դեպի անհունը», ապա կատարյալ աշխարհի երազանք «Հազարան բլբուլը», որ մնաց անավարտ» (Թումանյան):

Թումանյանի «Դեպի անհունը» պոեմը ևս յուրահատուկ մի աշխարհ է՝ հյուսված հոգու և զգացմունքների նրբին գույներից: Սակայն այն ներքին էությամբ տարբերվում է մյուս պոեմներից: Պոեմն սկսվում է ինքնատիպ ու գեղեցիկ պատկերով, որ, թերևս հատուկ է միայն հենց իրեն՝ Թումանյանին.

Բանաստեղծը նպատակ է դրել քննադատել կյանքի ստվերոտ կողմերը, այն է՝ հետամնացություն, խավար, որը պատճառ էր դառնում բազմաթիվ մահերի, ողբերգություն ծնում: Բանաստեղծը ցավով նկատել է, որ երբեմն լեթարգիկ քունը դիտվում էր իբրև մահ, որի հետևանքը լինում էր այն, որ մարդը թաղվում էր կենդանի:

Պոեմը տարբեր վերնագրեր ունենալով՝ «Կենդանի թաղվածը (Լեթարգիա»), «Սրհար», «Խավարի մեջ», «Ճերմակ աղավնի», ի վերջո ստացել է վերջնական անվանում՝ «Դեպի անհունը»: Փոխվել է սյուժեն, փոխվել է մտահղացումը, պոեմը ստացել է նոր ուղղություն:

Հընչում էր փըրփըրուն վտակն արծաթի,

Արևը խաղում պայծառ կապույտում...(էջ 218)

Իսկ «երազ հովիտը» գալիս է լրացնելու պայծառ, կապույտ ու արծաթե վտակի արևոտ պատկերը:

Ու թընդում էր հեշտ ծիծաղն ինձ ծաղրող,

-Չե՛ս կարող, չէ՛, չե՛ս կարող... (218)

Սա հուշն է մահացած Հասմիկի, հուշ, որ ավելի շատ իրական երազի է նման...

Պոեմը գրված է քնարական ուժեղ շնչով, աչքի է ընկնում որոշակի առանձնահատկություններով:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հովհաննես Թումանյանի «Դեպի անհունը» պոեմը թեմատիկ տեսանկյունից լայն ու խոր ընդգրկվածություն ունի: Այն Լոռվա նահապետական աշխարհին բնորոշող թեմա է, որ ժամանակային առումով ընդգրկում է 19-րդ դարի վերջը և 20-րդ դարի սկիզբը: Թեման ունի հնագիտական, պատմական, փիլիսոփայական ու բանասիրական արժեք:

Հետազոտությունն իրականացվել է պատմաբանասիրական, գրականագիտական վերլուծական մեթոդով:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Քնարական հերոսը բնութագրվում է իր հույզերի ու մտորումների շրջանակներում: Գործողություն, սյուժե գրեթե չկա: Առաջին հայացքից թվում է սոսկ քնարական հերոսի կնոջ՝ Հասմիկի հիվանդության պատճառով տուն վերադառնալու, թաղման և այլ երևույթների հիշատակությունն է. Բայց ո՛չ: Այստեղ կա և՛ խոհ, և՛ խորը աշխարհազգացողություն, և՛ կորստի ցավ, և՛ հոգու մի ծալքում փայփայած անուրջ այն «երազ հովտի...մասին, որը մարդկության առաջ կբացի «երջանկության խորհուրդը»:

Հանկարծ նա ճչաց,
Ձեռքումըս դառավ ճերմակ աղավնի,
Ու թևին արավ, ու թըռա՛վ, գընաց.
Գնա՛ց ճախրելու էն երազ հովտում... (Թումանյան, 1985)

Սուզվեց, կապույտի մեջ անէացավ երազը... Արթնանում է քնից հերոսը, սակայն ծանր, սև կասկածը նստած է հոգում: Ու մտքի մեջ ծանր ու թեթև է անում տեսածը, թեկուզ երազին չի էլ հավատում, բայց՝

Կյանքը երազ է, երազն էլ մի կյանք,
Երկուսն էլ անցվոր, երկուսն էլ պատրանք:(Թումանյան, 1985):

Հիրավի, կյանքում էլ այդպես է, գալիս է մի պահ, երբ խառնվում են կյանքի ու երազի իրական սահմանները: Հուշերն ու մտքերը կրկին շրջափակում են պոեմի հերոսին, և խառնվում են պայծառն ու խավարը:

Եվ արդեն թվում է, թե տեսնում ենք սև դագաղը, այնտեղ պառկած ճերմակազգեստ կնոջը, լսում նրա սգացող մոր ողբը: Ու չկա փրկության ափ, չկա թուփ, որից կարելի լինի բռնել...

Ու դժվար չէ ըմբռնել ալևոր մարդու խոսքերը.

Մենք՝ հողեղեններս՝ անճար ու չնչին,

Ի՜նչ ենք աստուծո կամքի առաջին...

Բաց է էս ճափեն ամենքիս համար...

Այո: Դա այն ճանապարհն է, որով գնում են «ծեր, երիտասարդ, մեղավոր, արդար» և բնավ էլ կարևոր չէ՝ «էսօր, թե՝ էգուց»: Մի վերին, չգրված օրենքով դա եղել է այդպես, այդպես էլ կմնա:

Եվ խորհում է հերոսը, թե ինչն է կյանքում հաստատուն, ինչը՝ անցողիկ: Եթե կյանքում հաստատուն մի բան կա, դա իմաստուն հոգին է, որ անմահ է...

Պոեմի VI-րդ գլուխն աչքի է ընկնում պանթեիստական խոր ընդհանրացումներով: Հերոսը փորձում է հաշտվել մահվան հետ, որն այնպես հզոր է, միայն թե գալիս է եզրահանգման. անցողիկ է կյանքը, դատարկ է մահը, և որ նրանք՝

Մի մեծ հավերժի ձևերն են միայն,

Ինչպես որ ահա «երեկն» ու «էսօր»:

Աշխարհն անընդհատ փոխվում է.

Էսօր ինչ է, որ-մի երեկ է նոր,

Էսօրն էլ կանցնի, երեկ կըդա՛ռնա...(Թումանյան, 1978):

Եվ այսպես անընդհատ, անվերջ փոխվում է ամեն ինչ, կրկնվում է նույնը, մարմինը նույնն է մնում, փոխվում է արտաքին կեղևը: Անկրկնելի ու գեղեցիկ է համեմատությունը.

Էսպես էլ հոգին

Փոփոխում է միայն կեղևն արտաքին-

Մարմինն՝ էսօրվան օրին նըմանակ,

Իսկ ինքը անվերջ, ինչպես ժամանակ:

Կամ ևս սիրուն,-հոսանուտ մի գետ,

Որ հազար ալիք ու ծրփանք ունի.

Գալիս են ալիք, անցնում են անհետ,

Անցնում են դեպի անդունդն օվկիանի,

Ուր ամեն ալիք, ուր ամեն մի կաթ

Ապրում է դարձյալ անվե՛րջ, անընդհատ...

Գնում են ալիքները դեպի անհունը՝ դեպի «ակունքը երջանկության», ուր ամեն ինչ հալվում, միանում է ամբողջի մեջ վերին խորհրդով: Ու թվում է, թե պոեմի քնարական հերոսը ինքն էլ է ձգտում թռչել այն ճերմակ աղավնու հետևից, որ մի օր թռավ իր ձեռքից, թռավ անվերադարձ: Խոր իմաստ կա դրա մեջ, որ կարելի է յուրովի ընկալել: Ձգտում, գուցե ոչ այն պատճառով, որ վաղ թե ուշ այդ է մարդու վերջին

հանգրվանը, այլև այն պատճառով, որ այնտեղ կարելի է գտնել և զգալ նրան, նրա հետ ապրել «մի ուրիշ, անվե՛րջ կյանքով»:

Իսկ հույսը չի մարում. գուցե նա կենդանի՞ է, գուցե նրան թաղե՞լ են ողջ-ո՞ղջ... Իսկ անողոք մի ձայն հանգիստ չի տալիս, տանջում է իր ճնշող խորհուրդներով՝ մարդու և կյանքի ունայնության մասին.

Եվ ի՛նչ է մարդը, և ի՛նչ իրեն կյանք.-
Եղծական ձևեր, ձայներ, շարժումներ:
Հավերժականը չունի կերպարանք,
Նա լուռ է, անշարժ, հաստատ, աներեր...

Ու կրկին՝ երա՞զ է, թե՞ իրականություն. հնչում են թաղման ճնշող զանգերը ու պատարագի հուզիչ մեղեդին: Լուռ է դագաղը, իսկ այնտեղ քնած հարսի ճերմակ զգեստով աղջիկը՝ հանգի՛ստ, անփո՛ւյթ ու անզգա, ինչպես դագաղի վրա լցրած վարդերը...

Կյանքը ասես կանգ է առել մի պահ, որ սկսվի նորից այնտեղ՝ «Վերին Երուսաղեմում», ուր միանում են մարդ ու աստված, ուր յոթնաստեղյան լույս խորանում չկա ցավ ու տառապանք, ուր հոգիներին սպասում է միայն բերկրանք և ուրախություն:

«Տրտմալի» է այս աշխարհը,-ասում է բանաստեղծը, իսկ մյուս աշխարհը՝ «անտիրական»: Ու պտտվում, պպտտվում են հերոսի մտքերը կյանքի ու մահվան, իրականի ու երազի շուրջ, թռչում են դեպի անհունը ու նորից՝ հետ: Ու մի պահ աշխարհը դառնում է հրաշալի: Անհայտ ու անծանոթ, օտա՞ր այդ աշխարհում՝

Ոչ կարելի էր կորցընել մի բան,
Եվ ոչ ունենալ քաղց ագահության,
Ինչպես գերեզման և ունայնություն,
Լուռ էր ու դատարկ, անփառք ու անհուն,
Ինչպես հայացքը մեռելի աչքի...

Եվ հեղինակը բերում է մի նոր համեմատություն՝ «Ինչպես հայացքը մեռելի աչքի. . .»:

Ի՞նչն է գրավում պոեմի հերոսին այդ պաղ ու անարև երկրում՝ անձայն աղո՞թքը, թե՝ անմարմին մարդիկ ու գունաթափ ստվերները: Դժվար է ասել: Գո՞ւցե. . .

Ցավի տակ կուրացած մարդու մտքով ինչ ասես որ չի անցնում: Հասմիկը մեռավ, բայց ապրում է բնության մեջ. . .Ուստի նա պատրաստ է տեսնելու նրան բնության երևույթների մեջ: Հասմիկն այնպես ուժգնորեն փայլող արևի շողերից մեկն

է և կամ ճախրող աղավնին, որ չգիտես, թե ինչ է ուզում ասել իր անհունի բարձունքներից.

Ազատ, երկնաչու էն ա՞մպն է թեթև,
Թե՞ էն աղավնին, որ հիմա թըռավ...

Իսկ հողաթումբը վերջն է ամեն ինչի: Սարսափի պատ, որից այն կողմ էլ մահը գին չունի.

Հանդո՛ւգըն մտքեր, ո՞ւր եք սլանում,
Ի՞նչ եք որոնում էն մութ սահմանում:
Ահա մեր կյանքի սահմանը վերջին,
Էն սև ու տխուր թումբերը չընչին...

Անողոք ու դառը ճշմարտություն: Ահա կյանքի վերջին սահմանը: Ահա մարդկային կյանքի ամենամեծ ողբերգությունը. ամեն ինչ ունայն է և իր վերջն ունի... Կա՛ ավելի չնչին բան, քան այդ մռայլ ու սարսափելի թումբերը: Կա՞ ավելի մեծ ողբերգություն, քան այն, որ մարդն զգում է մեծ ճամփաբաժանի գոյությունը: Չկա: Կա միայն ահեղ ու անողոք ճշմարտություն:

Պոեմի հերոսի մտքերն ամբողջ ընթացքում բախվում են իրար, մի բան, որ այնպես լարված է պահում ստեղծագործությունը: Որո՞նք են այդ մտքերը և ինչո՞ւ են այդպես համառորեն բախվում իրար: Առաջինը հերոսին այնպես ծանրորեն ճնշող խոհերն են այն մասին, որ հավետ բաժանվում է իր մյուս կեսից, իր էությունից, իր սիրած էակից: Ո՞վ կամ ի՞նչն է մեղավոր՝ մարդի՞կ, Աստվա՞ծ, չնչին թումբե՞րը, թե՞ մի ուրիշ, անտեսանելի բան... Միևնույն է՝ բաժանումը կա, այն դեղին գույն ունի, և վա՛ղ թե ուշ փռելու է տերևաթափի իր մեռնող շունչը:

Մյուսը այդ մութ աշխարհից, այդ տխուր լաբիրինթոսից լույս աշխարհ, խաղաղ եզերք հասնելու ձգտումն է, լավատեսական ելքը, որ որոնումների հետ է կապված: Չկա ուրիշ ճշմարտություն, քան այն, որ պետք է համառորեն որոնել ու գտնել մարդկային կյանքի մի ուրիշ, բարձր իմաստ: Այստեղից էլ ձգտումը դեպի անհունը, դեպի «երկնավետ»կյանքը.

Դեպի գերազանց վիճակն երջանիկ,
Ակն երջանկության, սիրո հայրենիք,
Ուր չըկան մարդիկ և ոչ ըզգացում,
Ուր ողջին մի մեծ կյանք է միացնում...

Դեպի երկինք՝ հանդերձյալ կյանքում գտնելու սիրո հայրենիքը, ձուլվելու կատարյալին: Ի՞նչ է սա: Հոգու անմահության քարո՞զ, հանդերձյալ կյանքի գո՞վք... Ո՛չ, դա միայն թվում է առաջին հայացքից: Եթե խորանանք պոեմի էության մեջ, կտեսնենք այն, ինչը հենց ընկած է պոեմի գաղափարական հիմքում՝ մարդու և բնության

միասնության, լավի և գեղեցիկի զուգորդման ձգտում: Եվ այստեղ է, որ անկարելի է չհիշել բանաստեղծի կրտսեր գրչեղբոր՝ Հովհաննես Շիրազի «Բիբլիականը» (Շիրազ, 1982): Բոլոր դեպքերում բանաստեղծն ուզում է մարդուն դիտել իբրև տիեզերքի օրգանական մի մասնիկ, տեսնել նրան՝ անմահացած մահկանացուին, որը գնում է միանալու Աստծուն:

Մի պահ հանդերձյալ կյանքը հմայում է անզգա ու անտարբեր իր լռությամբ, և թվում է՝ միայն այնտեղ կարելի է մխիթարություն գտնել: Բայց հետո համակվում ես մարդուն իբրև տիեզերքի օրգանական մի մասնիկը դիտելու բնապաշտական մտքով:

Եվ այդ լարվածությունը կա թե՛ առաջին, թե՛ վերջին տողում: Հակասությունների կծիկը բացվում է մերթ ընդ մերթ և ինչպես ձմեռային հին մի հեքիաթ կրկնում է նույնը.

Մի օր էլ մենք ենք էսպես գնալու,

Կյանքն էլ է դատարկ, մարդն էլ է դատարկ,

Ո՛վ է աշխարհքիս վրրա մընալու.

Անցավոր են ողջ-բախտ, վայելք ու փառք...

Հնչում է որպես կորստի հիմն, խփում եկեղեցու տխուր զանգի նման՝ «անցավոր են ողջ-բախտ, վայելք ու փառք...»:

Այո, սա այն սկիզբն է, որի շարունակությունը պիտի լիներ, և պիտի հանճարեղ լոռեցին հաստատեր այդ.

Անց են կենում սեր ու խնդում,

Գեղեցկություն, գանձ ու գահ...

Թեկուզև հագնի երկաթե տրեխ ու ընկնի աշխարհից աշխարհ, Հասմիկը գնաց ու հետ չի գալու.

Էն պաղ դիակն էլ, որ տեսնում ես դեռ,

Էն էլ հողի տակ կըծածկեն հիմա,

Կըգա՛ն, կըգնա՛ն տարիքն անտարբեր,

Ու նա կըփտի, նա հող կըդառնա:

Անունն էլ ապրող աշխարհքի համար

Դատարկ մի հնչյուն, անխորհուրդ մի բառ...

Հիրավի, կյանքը դատարկ է, բախտը՝ անհաստատ, «եթե սիրածի դագաղը մթին վիհ են իջեցրել ու դեմքը ծածկել»...

Տխուր է պոեմի հերոսը, բայց այդ տխրությունը քնքուշ է ու լուսավոր: Պիտի կորնչի հետքը այն հին աղջկա.

Որ ձեզնից առաջ հազար տարիներ

Նույնպես սիրահար ու ժըպիտ ուներ...

Եվ ո՞ւր է հիմա այդ ժպիտը՝ սառը հողի տա՞կ, թե՞ վարդերի գունատ թերթերին: Գուցե դեռ պիտի ժպտա՞ վաղորդյան ցողի միջից...

Մարդու և բնության փոխհարաբերությո՞ւնը չէ սա արդյոք: Թերևս:

Եվ նորից նույնը: Անհոգ խաղում է արևը շողերի հետ, անհոգ ու հանգիստ մարդիկ զրույց են անում, կյանքը հոսում է...

Իսկ հետո իջնում է գիշերը, իջնում է՝ բերելով իր հետ խաղաղություն, որը թեև «տանջալի է», բայց և ուժաթափ հոգուն կարող է հանգիստ բերել: Եվ վաղ թե ուշ քառսը պիտի կլանի «մահ, մեռել, շիրիմ», որոնք հետո պիտի դառնան «երերուն կետեր», ու, ի վերջո, հանգչեն դողալով: Իսկ կյանքը պիտի մնա, լի ուրախություններով ու կորուստներով, վերելքներով ու վայրէջքներով.

Երկինքն էլ էսպես պայծառ ու հանդարտ...

Եվ ինչպես երեկ, էնպես ամեն մարդ...

Եվ ի՞նչ: Մնում է միայն «անմահության խորհուրդին»՝ բանաստեղծի իսկ բառերով ասած, և հավատալ «երազ հովտի» քնքուշ հեքիաթին ու հեքիաթանման իրականությանը, մնում է ընդունել արարչագործության ոգուն, որ կարծես թե ինքը բնությունն է: Մնում է հավիտյան անհունին ձուլվելու գաղափարը.

Նա գընում է բարձր ու անվերջ
Դեպի անհունն ու հավիտյան,
Վիշտը հանգչում է նըրա մեջ,
Ապրում սերը անապական:
Փա՜ռք խորհուրդին անմահության...

Եվ շուրջը լիքն է շուշաններով, անուշ բուրմունքով է պատած անտառը, լսվում է եդեմի թովչական երգը.«Փա՜ռք անպատում մըխիթարչին...»: Այո, մարդն ապրում է բնության մեջ, բնության հետ, ուստի նրա նման հավերժական է, միևնույն է՝ լինի կենդանի, թե, մեռնելով, ձուլվի անեզրությանը: Սա է, որ հիմք է տալիս Հասմիկի մահվան մռայլը հաղթահարել, համակվել լավատեսությամբ: Սա է, որ կողմնորոշում է նրան փնտրել սիրած էակին բնության երևույթների մեջ՝ «թուխ ամպի ետև» և ամենուր: Եվ նույն այդ բնությունը ցույց է տալիս նրան, թե ինչ է «սիրո իմաստը վերին».

Հալվե՛լ, միանա՛լ,
Իրեն մոռանալ...

Եվ վերջին՝ XV գլխում, նորից վտակը փրփրած հնչեցնում է իր երգը մարդու՝ անհունին ձուլվելու մասին, արևը խաղում է իր շողերի հետ, պայծառ կապույտը կարծես կյանքի հայելին է, և մարդիկ այնտեղ տեսնում են իրենց ձեռքերը, մաքրագործվում են այնտեղ աշխարհային մեղքերից: Եվ երկնի կապույտն ու արևի

շողը, արծաթե վտակը բանաստեղծի պոեմում մի տեսակ դառնում են սիմվոլիկ պատկերներ, և բանաստեղծը մեծ վարպետությամբ ու նրբությամբ մատուցում է իր ասելիքը:

Նա ներկայացնում է պարզ հոգիների ձգտումը դեպի անհունը, որ սոսկ իր

վերացական փիլիսոփայության հետաքրքրության արդյունք չէր: Այդ պարզ հոգիները դեպի մարդն ունեցած անհուն սիրո կրողներն են: Եվ զարմանալի չէ, որ այն զվարթ ձայնը չի երևում, բայց կանչում է մի ուրիշ կյանքի, կանչում է այնտեղ՝

Ուր չըկա մահ անջատում,

Ուր սերն անվե՛ըջ, անհատնո՛ւմ...

«Մեծ բանաստեղծի նշանավոր երկերը հանրահայտ են: Ամենքը խոսում են դրանց մասին, ամենքը գրում: Բայց ընդհանուրի կողմից ուշադիր դիտված բանաստեղծների մոտ էլ պատահում են «աննշան», «փոքրիկ» ընդգծված փայլ չունեցող և «անաղմուկ» երկեր, որոնց մեջ առանձին ուժով են արտահայտված հեղինակային խոհերն ու տառապանքը: Դրանք հոգու բեկորներ են, մտերիմ, հարազատ ապրումներ..., որոնք շատ հաճախ ասվում են մեղմաձայն, թեև ժամանակին չեն գտնում անմիջական արձագանք, բայց ազնիվ մետաղի նման երբեմն չեն կորցնում իրենց բուն հատկանիշը և հանկարծ շողում են ողջ պայծառությամբ (Թամրազյան, 1978):

Խոսքը Հովհաննես Թումանյանի «Բարձրից» բանաստեղծության մասին է: Նույնը կարելի է ասել «Դեպի անհունը» պոեմի մասին, որը գրված է ժամանակակից շնչով և նուրբ երանգներով:

Ստեղծագործությունն ամեն ժամանակի մեջ նորովի է իմաստավորվում, պահում իր ներքին ասելիքն ու փայլը: Իզուր չէ, որ գրականագետ Հրանտ Թամրազյանն այն անվանել է «խորապես անհատական կնիք ունեցող» պոեմ (Թամրազյան, 1978):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ Հովհաննես Թումանյանը յուրովի է մեկնաբանել մահվան առեղծվածը՝ կենտրոնանալով իր ապրած տարիների հետամնաց մի երևույթի վրա, որը կոչվում է լեթարգիական քուն: Սիրած էակի՝ Հասմիկի մահվան ողբերգությունը պոեմի քնարական հերոսին մխրճում է տառապանքի մեջ, հուզական մտորումների մեջ ձգում, տանում դեպի փիլիսոփայական խոհերի խորքերը. արդյո՞ք Հասմիկին կենդանի չեն թաղել, գուցե նա մահացա՞ծ չէր, ի՞նչ է մարդու ֆիզիկական մահը.... Այս խոհերը նրան ստիպում

են երկար խորհել կյանքի ու մահվան հարցերի շուրջ և, ի վերջո եզրահանգել՝ չկա մահ, բոլորն էլ վերջում գնում են դեպի անհունը՝ ձուլվում բնությանը...

Այո, մարդն ապրում է բնության մեջ, բնության հետ, ուստի նրա նման հավերժական է, միևնույն է՝ լինի կենդանի, թե, մեռնելով, ձուլվի անեզրությանը: Սա է, որ հիմք է տալիս Հասմիկի մահվան մռայլը հաղթահարել, համակվել լավատեսությամբ: Սա է, որ կողմնորոշում է նրան փնտրել սիրած էակին բնության երևույթների մեջ՝ «թուխ ամպի ետև» և ամենուր: Եվ նույն այդ բնությունը ցույց է տալիս նրան, թե ինչ է «սիրո իմաստը վերին».

Հալվե՛լ, միանա՛լ,

Իրեն մոռանալ...

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Թամրազյան Հ. (1978). Բանաստեղծը և ճակատագիրը, Երևան, Սովետական գրող.

Թումանյան Հ. (1985). Դեպի անհունը, Երևան, Սովետական գրող.

Հայ նոր գրականության պատմություն (1979). հատոր 5, Երևան, ԳԱԱ

Շիրազ Հ. (1982). Բիբլիական, Երևան, Սովետական գրող.

REFERENCE LIST

Tamrazyan G. (1978). Poet i sud'ba *(The Poet and Destiny)*, Erevan, Sovetskij pisatel'.

Tumanyan O. (1985), Navstrechu nezhiti *(Towards the Undead)*, Erevan, sovetskij pisatel'.

Istoriya novoj armyanskoj literatury (History of New Armenian Literature). (1979), tom 5, Erevan, NAN.

Shiraz O. (1982). Biblejskoe *(Biblical)*. Erevan, Sovetskij pisatel'.

РЕЗЮМЕ

ПОЭМА ОГАННЕСА ТУМАНЯНА «К БЕСКОНЕЧНОСТИ»

Сирвард Асрян, Анна Давтян

Объектом исследования являются отсталые нравы и невежество в сельской среде. Цель исследования – раскрыть моральные устои прошлой эпохи, оригинальность человеческого мышления, размышления о взаимосвязи жизни и смерти, человека и природы на основе стихотворения Ованнеса Туманяна «К нежити».

Методология и методы исследования: в качестве методологической основы были взяты специфические проявления сельского менталитета исторического периода, взаимосвязь менталитета и реальных действий, причинно-следственные связи, особенности общего развития человека в данный период.

Сравнение данного периода с современностью, анализ литературного произведения, а также систематическое изложение результатов работы и единая целостность различных подходов.

В заключение отметим, что человек, как часть природы, продолжает жить в природе и после смерти, сливаясь с ней; его физическая смерть ещё не означает конец его жизни, потому что он уходит в бездну, оставаясь в памяти людей со своими делами и добрыми воспоминаниями, и, как писал наш бессмертный Г. Туманян: «Дела бессмертны, знайте это хорошо».

В качестве главного вывода отметим, что физическая смерть не является концом жизни, потому что человек был и продолжает оставаться органической частью природы, продолжая жить в памяти людей, эмоциональных переживаниях и оставляя добрый след своим образом для живых.

Ключевые слова: *отсталость, тьма, смерть, трагедия, летаргический сон, быть похороненным заживо, память, боль утраты, душа, бездна.*

SUMMARY

HOVHANNES TUMANYAN'S POEM “TO INFINITY”

Sirvard Asryan, Anna Davtyan

The object of research is backward manners and ignorance in the rural environment. The purpose of the study is to reveal the moral foundations of the past era, the originality of human thought, reflections on the relationship between life and death, man and nature based on Hovhannes Tumanyan's poem "To the Dead". Methodology and methods of the research. The specific manifestations of the rural mentality of the historical period, the relationship between the mentality and real actions, cause-and-effect relationships, and the features of the general human development in this period were taken as a methodological basis.

Comparison of this period with modern times, analysis of a literary work, as well as a systematic presentation of work results and the unity of various approaches.

In conclusion, we note that a person, as a part of nature, continues to live in nature even after death, merging with it; his physical death does not mean the end of his life yet, because he goes into the abyss, remaining in the memory of people with his deeds and good memories, and, as our immortal G. wrote. Tumanyan: "Delas are immortal, know this well."

As the main conclusion, we note that physical death is not the end of life, because man was and continues to be an organic part of nature, continuing to live in people's memories, emotional experiences and leaving a good mark on his image for the living.

Key words: *backwardness, darkness, death, tragedy, lethargic sleep, to be buried alive, memory, pain of loss, soul, abyss.*

Հոդվածը ստացվել է՝ 22.02. 2026
Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 25.02. 2026
Հոդվածը երաշխավորվել է տպագրության՝ 15.03.2026